



Ախալքալაքի թանգարանում ավելացվել է նոր ցուցասրահ

Ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձ՝ Ախալքալաքի եւ Գումբուրդոի թանգարանը 2012 թվականին միտրոպոլիտ Նիկոլոզի նախաձեռնությամբ հիմնվեց: Հենց նա էր հավաքել հնագիտական, երկրաբանական եւ ազգագրական եզակի նմուշները:

Թանգարանում մուտքը անվաճար է եւ այն կոմունալ վճարումների եւ աշխատավարձերի գումարները պատրիարքարանի բյուջեից է ստանում: Ֆինանսավորումը շատ չնչին էր եւ չէր հարմարվում զարգացնել ենթակառուցվածքը: Իսկ այցելուների թիվը ամեն տարի ավելանում էր: Իսկ սրա պատճառը այն է, որ վերելում նշված ցուցանմուշներից բացի, քրիստոնեական աշխարհում «հինգերորդ ավետարան» կոչված Թուրինյան սավանի ճշգրիտ պատճենը հատուկ կառուցված մատուռում է պահվում:



«Մրբության աղոթքի համար բազմաթիվ մարդիկ են գալիս, ինչպես Վրաստանից այնպես էլ արտասահմանից: Կարելոյ է նշել, որ թուրինյան սավանը ունի հատուկ սերտիֆիկատ, որը հաստատում է նրա իսկությունը բնօրինակի հետ: Իսկ սավանի համար հատուկ կառուցված շենքը նկարագարով է Դավիթ Մուլակաուրի կողմից ամենադժվար եւ ամենահին մեթոդներից մեկով, որը հայտինի է էնկաուստիկայի անունով» - ասում է թանգարանի տօրեն Նինա Մուրցիավալաձեն:

Նրա խոսքերով, վեհապետ Նիկոլոզը նկարչի ընտանիքում է մեծացել եւ նա հայտնի Վրացի նկարիչների կողմից կատարված աշխատանքների հիանալի հավաքածու ուներ, որը իր հորը, նաեւ նկարիչ-կերամիկիստ՝ Գիվի Փաշուշվիլիին կուլեգաներն էին նվեր տալիս: Վեհապետը անձնական հավաքածուն տվեց թանգարանին: Այսպես հայտնվեցին էլենե Ախվիեղիանի, Լադո Գուդիաշվիլու եւ Դավիթ Կակաբաձեի գլուխգործոցները Ախալքալաքի թանգարանում: Իսկ այսպիսի հարստությանը անհրաժեշտ է հատուկ խնամք եւ պայմաններ: Թանգարանը օգնության համար դիմեց LAG-ին: Ստեղծվեց սոցիալական նախագիծ, որը ֆինանսավորեց Եվրամիությունը:





«Դրամաշնորհի տեսքով ստացած գումարով կառուցեցինք թանգարանի երկրորդ հարկը, որը ժամանակակից թանգարանի համար անհրաժեշտ լուսավորման, ջերմաստիճանային եւ անվտանգության համակարգերով է կահավորված: Սրահում արդեն ցուցադրված են հայ եւ վրացի նկարիչների աշխատանքները, որոնք այցելուները կարող են դիտել անվճար» - ասում է թանգարանի տնօրենը:

Վերականգնված ենթակառուցվածքը պահանջեց ավելացնել նոր աշխատակիցներ եւ ինչպես տիկին Նինոն է նշում, 3 տեղացի արդեն զբաղվեց թանգարանում:

Ընդհանրապես, թանգարանը հասարակության զարգացման ծառայության տակ գտնվող ինստիտուտ է, որը միշտ բաց է լայն հասարակության համար եւ ի տարբերություն պատկերասրահների, կենտրոնացված չէ ֆինանսական շահույթի վրա:

Ախալքալաքիում այսպիսի մշակութային կենտրոնի գոյությունը առանձնապես նշանավոր է, քանի որ շրջանում այսպիսի հաստատությունների նվազություն կա: Այն կնպաստի այս հնագույն քաղաքի ժողովրդականացմանը, ավելի շատ զբոսաշրջիկներ կգրավի եւ կձեռավորի տեղի երիտասարդների մշակութային ճաշակը:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեանական նախագծի` (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով` 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն էր գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը` www.enpard.ge.

